

Մ Ա Ս Ն Ա.

ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

3. ԵՆՈՒՆԴԻՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԿԵԱՆՔԸ ՄԻՆՁԵՒ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Սիւնեաց աշխարհի մէջ, Տաթեւի հա-
րաւակողմը, բարձրանիստ դիրքի վրայ կը յի-
շուի, սկսեալ Ժ. դարէն, ի՞նչ որ ան ան դիւղը,
որ կը վերաբերէր Աճանան (Բաղք) գաւա-
ռին¹: Փոքրիկ եկեղեցի մը, նուիրուած Ս.
Աստուածածնի, կը կազմէր անոր գլխաւոր
դարձը: Անուանի հանդիսացաւ դիւղս սկսեալ
Ժ.Ձ. դարու վերջին քառորդէն, իբրեւ ծննդա-
վայրը Մովսէս Գ. Կաթողիկոսի:

Ծնաւ Մովսէս 1577/78ին² իբրեւ զաւակ
«մեծազգի» ծնողաց: Իր ծնունդն երգած է
Մկրտիչ Ջուղայեցի 1628ին այսպէս (էջմ.
1171).

¹ Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 277:

² Մովսէս 1628ին էր «ի չափ հասակի ամաց յիս-
նեկի յորելեան կարգի» (ըստ Մկրտիչ Ջուղայեցւոյ.
էջմ. 1171, 236բ). վախճանեցաւ 1633, Մայիս 21ին,
երբ 55 տարեկան էր (էջմ. 507). ուրիշներու համա-
ձայն մահը պատահած է «ի հասակի վաթսուն ամաց»
(տե՛ս վարը § 18):